

ՏԵՍԻԼ Բ.

ԵՐՈՒԱՆԴ, ՄԻՀՐԱՆ և առաջինքն:

ԵՐԴ. (ՏԵՇԵԱԼ ՊՈՊԻՆ 'Ի ՅԵ-ԱՆ ԵՐՈՒԱՆԴ, ԽԵՐԵԿ ԻՆ ԿԱԺ ՀԱՐԻԱՆԵԼ ՊՏԵ-Ը) . ԶԲ ԳՈՐԾԵՍ ՆԵՆԳՈՂ ԳԱւա-
ՃԱՆ. արդ միթէ և ա՞չ իմ խաբեցան այժմիկ . այ
յանդգնութեանն . 'ի հրապարակիս ասա սուր
հանել ընդդէմ սիրելոյս :

ԵՐԳ. Ոչ, խաբիս... ոչ է նա... ոչ էրդում ան-
հանձար :

ՏՐ. ԽԱՅԵԱ, դիւցազունդ, այն նորա սրտմտու-
թիւն ոչ էր յիմ վերայ: (ԽԻՆԱ-Ի). ԱՌ, այժմ
մատնէ զիս:

ԵՐԴ. Զուր հնարիս արդարացուցանել զնա. սէր
բարեկամութեան զառածեցոյց զեեզ. միան-
գամ ատելութեան լուայ, արդ ոչ լսեմ սիրոյ:
Արի, Միհրան, տուր զգովաւերկածս . 'ի բանտ,
'ի բանտ զանօրին դահճճդ:

ՄԻՀ. (Ի ՅԵ-Ը) Կոռնակ, սիրելիդ իմ, իմով ձե-
ռամբ, ահ ներեա ինձ. (առ և արիանէ վարուուն 'Ի
ՀԱՅ-ԱՅ):

ԵՐԳ. Արդ ուրախ եմ և ինդամ ընդ կապանս,
զի մերձեցայ մահու. միայն կամեի իմն ժամ մի
շնորհէլ ինձ, դիւցազունդ, զի ցուցեց զիարդ
մեռանիցի կոռնակ:

ԵՐԴ. Սպառնամս ևս, ժափիրհ լեզուագար. ոչ
ժամ մի, այլ աւուրս շնորհեցից քեզ կտաել
զմարմինդ:

ԵՐԳ. Ոչ սպառնամիք են այս, տէր իմ արքայ,
այլ զի այժմ ոչ է ինձ թոյլ այլ ազգ ինչ խօսել:
Եթէ ոչ յաջողեսից ինձ, յայնժամ տիրեցայց
ընդ մահու, յայնժամ խորշեցայց 'ի մահուանէ:

ԵՐԴ. Քարշեա տուր զդա 'ի բանտ, մի ևս լուայց
զդիւթեալ բարբառդ. (ՄԻՒՐԱՆ ԽԱՊէ Փա): — Արի
եկ ընդ իս, քաջազուն Տուր... ահ, ոչ մոռա-
նամ. գիտեմ զի փառքն են քեզ առաջնորդ 'ի
բարիս, ոչ վարձք: (Գան):

ՄԻՀ. Եղնուկ ինձ, զորքան այր բռնադատիմ 'ի
բանդ վարել կապանօք. զինչ արդեօք այսոցիկ
երկինք տացեն կատարած:

Վերջ Բ. Արարուածոյն:

ԴՐՈՒԱԳ 'Ի ՄԱՆ ՌԵԿՈՂԻԱՆԵԱՅ ¹:

Վաղ ուրեմն մեկնեալ էաք մեք ան-
տի, և ահա տեսի սառուցեալ երկուս 'ի
խոռոշ մի, այնպէս զի միոյն գլուխ էր
միւսոյն զլխաղիր. և որպէս սովեալ ոք
հաց ճարակի, այսպէս որ կայրն զլխով

1 Բանիբուն բանասիրի մը աղաւանացը զիջա-
նելով յանձն առինք Տանդէի առաջինայ հրաշա-
լի գրուագիս այս երրորդ արձակ թարգմանու-
թիւնն ալ 'ի լցու ընծայելու:

'ի վեր՝ հարստեաց զատամունս 'ի միւսն,
ուր ընդ ուղղոյ՝ ծոծրակն զօդի: Սոյն
գունակ և Տիդէոս առ զայրոյիթ սըրտ-
մուութեան կրծէր ատամնացի գքունան
ՄԵՆԱԼԻՎԱԳԵԱՅ . իսկ սա զգանկն յօշա-
տէր և շուրջ զնովաւ: Ով դու, ասացի,
որ այդպէս հանգոյն անասնոյ ցուցանես
'ի դա զքէն վրիխուց կեղեքեալ զդա,
ասա ինձ ընդէր. զի վասն դորա թէ
դու արտասուես, ծանուցեալ թէ ով
ես դու և թէ զինչ եղեռն դորա, և ես
իսկ այլազգ յաշխարհն վերին տարայց
զքէն լուր, թէ այն իւ խօսիմն աստանօր
ընդ քեզ՝ ոչ ցամաքեացի:

Ամբարձ զբերանն 'ի վեր եղեռնա-
ւորն այն 'ի զիշախանձ ճաշոյն մաքրեալ
զայն հերօք ճակատուն, զի զյետակողմն
ապականեալ էր: Եւ ապա բարբառե-
ցաւ . կամիս զի արծարծեցից յիս զցաւ
աղէկէզ, զոր չև իմ պատմեալ խորհելն
և թէ զայն զսիրտ իմ ճմիէ: Այլ եթէ
բանք իմ եղիցին սերմանք, որք դըու-
ժանին զոր եսն ծրձեմբերցեն վատ ա-
նուն, տեսցես դու զբարբառ իմ խառն
ընդ արտասոււ: Ոչ զիտեմ ով ես, և
ոչ թէ զիարդ գալուստ քո այսրէն 'ի
սանդարամետս: այլ տոսկեան ոք ինձ
թուիս արդարեւ 'ի լուր քո խօսից: Գի-
տես զի եղէ ես կոմնն Ուկոլին, և սա
զիտապետն է Ուուճճիէրի: Եւ արդ ա-
սացից ընդէր աստանօր կամ ես նմա-
հուպ: Ի՞ր ՚ի նենգամէտ խորհուրդս
նորա եղեալ ապաստան՝ կալայ և սպա-
նայ, այն յայտ իսկ է քեզ. իսկ որ բնա-
ւին զանխուլէ 'ի քէն, թէ որպիսի մահ
հաս ինձ անողորմ, ունկնդիր լեր արդ,
և տեղեկացիս քանի մեղաւյիս: Նրին
լուսանցոյց անդ 'ի գղեկին որ վասն իմ
կալաւ զանունն Սովու, յորում և այլոց
անկ լիցի փակիլ, եցոյց ընդ ծերպ իւր
լուսնեակս ոմանս, և ահա անուրջ մի
չարաբաստիկ զհանդերձելոց պատա-
ռեաց ինձ քօլ: Երեսութանայր սա ինձ
պետ և տէր, զգայլ ընդ կորիւնս ընդ
լեառն հալածեալ . քանզի Պիսացւոց
չէմարթ տեսանել երբէք զլուկկա: Ծնդ
շունս վտիտս յափշտակասէրս կուլան-
տի, Սիզմնտ և լանֆրանկի ճակատեալ

կային . ի դոյզն ընթացից թուէին նոքա ինձ վաստակաբեկք , հայրն ընդ որդիս . և տեսանէի զի պատառէր նա սայրասուր ժանեօք զկողս նոցին : Եւ իբրև զարթեայ ընդ այզս այգուն , լուայ զաշխարել որդեկաց իմոց՝ որ կային 'ի քուն անդանօր զինև՝ և խնդրել հացիկ : Անագորոյն ես , եթէ տակաւին ոչ արգահատիս ընդ գոյժն որ ազգէր իմոււմն սրտի . և թէ չարտասուես ընդ այս , և ընդ ինչ լիցիս արտասուել : Վաղ իսկ զարթուցեալ էին 'ի քնոյ , և ժամն ճեպէր՝ յորումհանապազ սովորն էին մեզ ածել կերակուր . անցնիւր երկրայէր ընդ անուրջս իւր : Եւ ահա լուայ ներքուստ ճոնչիւն աղխելոյ դրանց ահեղ դղեկին . և զաչս իմ 'ի դէմն որդեկաց իմոց դարձուցի առանց յօդելոյ բարբառ : Ոչ արտասուէի՝ այնպէս սալացեալ 'ի ներքս սրտիս . ողբային նոքա . և Անսելմեակն իմ ասաց ցիս . Հայրիկ , Էր այդպէս հայիս , զի՞ եղեւ ընդ քեզ : Այլ ես ոչ արտօռը , և ոչ յաւելի բան մի զօրն զայն , և ոչ զգիշերն որ ածէր յաշխարհ զարեն վաղուեան : ի ծագել աղօտ նշուլից 'ի խորշ դժընդակ բանտին , և 'ի տեսանել իմում 'ի քառեակ դէմն անդ զնոյն իսկ զիմն կերպարան , խածի առ վշտիս զերկոսին ձեռս իմ : Նոցա զմուաւ ածեալ՝ զի ես զայն առ 'ի կազզուրել զաիրտ առնէի , ելին կանգնեցան իսկոյն և ասեն . Հայր , յոյժ դուշնաքեայ իցեն մեր թախիծք , թէ մեօք ճարակիս . դու զգեցուցեր մեզ զայս հէզ մարմին , և դու 'ի սմանէ մերկացո զմեզ : Յայնժամ թագուցի զտագնապ սրտիս , զի մի յաւելից նոցա տըխրութիւն . կացաք անբարբառ զայն օր և վաղիւ . երկիր անողոք , ոհ Էր ոչ հերձար : Եւ այն ինչ հասաք աւուր չորրորդի , անկաւ առ ոտս իմ կադզոս տարածեալ , և ասէ . Հայր իմ , ընդէր չօդնես ինձ : Աստ անկաւ մեռեալ . և որպէս դու զիս տեսանես , տեսի ես անդ զերեսին մի առ մի անկեալ 'ի հինգերորդի և 'ի վեցերորդ աւուր 'ի գետին : Յայնժամ գնայի ես կոյր առ խարխափ առ մէն մի նոցունց , զաւուրս երիս

ձայնեալ զնոսա՝ յետ մահու նոցին : Եւ ապա յաղթեաց սով վշտաց սրտի : Յասել իւրում զայս , դժնեայ հայեցիւք եխած վերստին զողորմելի գանկն ատամամբք իւրով որ պատահեցին ոսկերն իրուու շան ժանիք կարծրակուու : Ո՛վ Պիսա քաղաք , նախատինք գրոհից գեղապանծ երկրին , ուր քաղցրահնչէ սին 'ի լսելիս . քանդի մերձակայք քոյամեն քաղաքք 'ի պատմել գքեզ , հասցէ կապրայա , հասցէ Գորգովնա , թումբը կանգնեսցեն 'ի բերան Առնեայ , զի հեղձցին 'ի քեզ բնակիչք համօրէն : Եթէ զմւկովին կոմն եցոյց համբաւ բերդորէից քոյց եղեալ մատնտու , չէր պարտ քեզ զորդիս նորին այնպիսեաց մատնել աղետից : Զքմեզս առնէր հասակ նորաբոյս և նորն թերէ՝ զմւկոչիոնէ և զՊրիկադա և զմիւս երկոսին զոր երգն իմ 'ի վեր անդր յիշատակեաց :

ՏԱՐԴԵ . ՏԱՐՑԱՐՈՍ

ԵՐԳ ԼԲ-ԼԴ.

Գաղտնիք Ովկիանոսի .

Պ . Կրին անուանի ծովասուզակը Հայիդիի մէջ Սիլվլր Պէնքս (Արծաթեայ Խարակք) ըսուած տեղը տեսածը այսպէս կը նկարագրէ . «Երբ ծովուն մէջ մը խեցայ , բուստի մեծ խարակի մը վրայ կեցայ , որուն երկայնութիւնը 40 մղոն , լայնութիւնը 10էն 20 մղոնի կը հասնէր : Այս բուստի ահագին խարակը ծովասուզից առջին այնպիսի գեղեցիկ ու վեհ տեսարան մը կը բանայ՝ որ երբէք տեսնուած չէ : Զըին խորութիւնը 10էն ինչուան 100 ոտք կը զանազանի . և այնպէս ջինջ է որ ծովասոյզը ջուր մըտնելին ետքը 2 ու 300 ոտք հեռաւորութենէ կրնայ տեսնել քիչ մ'աչքի մշուշութեամբ : Շատ տեղ Ովկիանոսին խորը մարմարիոնէ սալայատակի պէս շիտակ է . ուրիշ տեղ՝ բուստէ սիւներ կան կանգնած , 10էն ինչուան 100 ոտք երկայնութեամբ և 1էն 8 ոտք տրամագծով : Ամենէն բարձր սիւներուն դլուխ .